ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 փետրվարի 2020թ. N 94-Ա

«ՄՏՍ ՀԱՅԱՍՏԱՆ» ՓԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 1-ին մասի և 619-րդ հոդվածի 1-ին կետի **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ««Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2016 թվականի հունիսի 17-ի ՀՕ-100-Ն օրենքով Գնդեվազ գյուղական համայնքը միավորվել է Ջերմուկ համայնքին՝ կողմերի համաձայնությամբ Գնդեվազ համայնքի՝ ի դեմս նախկին համայնքի ղեկավար Վ. Պողոսյանի, և «Ղ-ՏԵԼԵԿՈՄ» փակ բաժնետիրական ընկերության (այժմ՝ «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ)՝ ի դեմս «ՀԱՏԱԿԱԳԻԾ» ՍՊ ընկերության տնօրեն Սերոբ Պետրոսյանի միջև 2005 թվականի սեպտեմբերի 1-ին բջջային հիմնական կայանի տեղակայման նպատակով կնքված (վավերացված է 01.09.2005 թ. Վայքի նոտարի N 526 սեղանամատյանում) 200 քմ հողամասի վարձակալության պայմանագրում (այսուհետ՝ պայմանագիր) կատարել հետևյալ փոփոխությունները՝

- *պայմանագրի կողմ՝ Վարձատու, ճանաչել Ջերմուկ համայնքին,*
- *պայմանագրի 3.5 կետի առաջին նախադասությունը շարադրել նոր՝ հետևյալ խմբագրությամբ՝ «Սույն պայմանագրով վարձավճարները կատարվում են Երևանի Կենտրոնական Բանկի Գործառնական վարչության (ԿԲ ԳՎ) «900365031088» հաշվեհամարին»:*

2. «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ի հետ օրենքով սահմանված կարգով կնքել սույն որոշման առաջին կետում նշված հողամասի վարձակալության պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին համաձայնագիր:

3. Սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ի կողմից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 փետրվարի 2020թ. N 95-Ա

Ա. Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍՆ ԸՆԴԼԱՅՆԵԼՈՒ ԵՎ ԱՅՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետին, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետին, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի «Քաղաքացիներին կամ իրավաբանական անձանց սեփականության իրավունքով պատկանող կառուցապատված հողամասերի, ինչպես նաև գյուղատնտեսական նշանակության հողամասերի ընդլայնման նպատակով տրամադրման ենթակա հողամասը որպես առանձին գույքային միավոր աճուրդային կարգով օտարելու անհնարինության որոշման չափորոշիչներ սահմանելու մասին» N 550-Ն որոշման 3-րդ կետին և Ջերմուկ համայնքի ավագանու 2018 թվականի մարտի 16-ի «Ջերմուկ համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասերը օրենսդրության պահանջներին համապատասխան ուղղակի վաճառքով օտարելու կամ վարձակալության տրամադրելու մասին» N 21-Ա որոշման համապատասխան, հաշվի առնելով Երևան քաղաքի բնակիչ Ա. Հ. Հովհաննիսյանի դիմումը (մտից N 1360, 11.12. 2019 թ.) **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Երևան քաղաքի բնակիչ Անահիտ Հայկի Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղում գտնվող 10-016-0238-0004 կադաստրային ծածկագրով սեփական գյուղատնտեսական նշանակության 2,3 (երկու ամբողջ երեք տասնորդական) հա մակերեսով հողամասը (հողատեսքը՝ արոտավայր) ընդլայնել՝ այդ նպատակով ուղղակի վաճառքով Ա. Հ. Հովհաննիսյանին օտարելով կից գտնվող 10-016-0238-0005 կադաստրային ծածկագրով 1,1 (մեկ ամբողջ մեկ տասնորդական) հա մակերեսով հարակից համայնքային սեփականության հողամասը (հողատեսքը՝ արոտավայր):

2. Սույն որոշման առաջին կետում նշված 1,1 հա հողամասի վաճառքի գինը կազմում է 68 750 (վաթսունութ հազար յոթ հարյուր հիսուն) դրամ՝ ըստ կադաստրային արժեքի (1 հա կադաստրային զուտ եկամուտը՝ 2500 դրամ):

3. Սահմանել, որ սույն որոշմամբ օտարվող հողամասը տրամադրվում է բացառապես գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով:

4. Սույն որոշման առաջին կետում նշված հողամասի օտարման համար Ա. Հ. Հովհաննիսյանի հետ կնքել առուվաճառքի պայմանագիր:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ա. Հ. Հովհաննիսյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից::

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2020 փետրվարի 28
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 փետրվարի 2020թ. N 96-Ա

Գ. Մ. ՉՈԲԱՆՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍՆ ԸՆԴԼԱՅՆԵԼՈՒ ԵՎ ԱՅՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետին, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին կետի 8-րդ ենթակետին, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի «Քաղաքացիներին կամ իրավաբանական անձանց սեփականության իրավունքով պատկանող կառուցապատված հողամասերի, ինչպես նաև գյուղատնտեսական նշանակության հողամասերի ընդլայնման նպատակով տրամադրման ենթակա հողամասը որպես առանձին գույքային միավոր աճուրդային կարգով օտարելու անհնարինության որոշման չափորոշիչներ սահմանելու մասին» N 550-Ն որոշման 3-րդ կետին և Ջերմուկ համայնքի ավագանու 2018 թվականի մարտի 16-ի «Ջերմուկ համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասերը օրենսդրության պահանջներին համապատասխան ուղղակի վաճառքով օտարելու կամ վարձակալության տրամադրելու մասին» N 21-Ա որոշման համապատասխան, հաշվի առնելով Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղի բնակիչ Գ. Մ. Չոբանյանի դիմումը (մտից N 41, 17.01.2020 թ.) **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղի բնակիչ Գայանե Մացակի Չոբանյանին սեփականության իրավունքով պատկանող Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղում գտնվող 10-016-0208-0079 կադաստրային ծածկագրով սեփական գյուղատնտեսական նշանակության 403 (չորս հարյուր երեք) քմ մակերեսով հողամասը (հողատեսքը՝ արոտավայր) ընդլայնել՝ այդ նպատակով ուղղակի վաճառքով Գ. Մ. Չոբանյանին օտարելով կից գտնվող 10-016-0208-0098 կադաստրային ծածկագրով 400 (չորս հարյուր) քմ մակերեսով հարակից համայնքային սեփականության հողամասը (հողատեսքը՝ արոտավայր):

2. Սույն որոշման առաջին կետում նշված 400 քմ հողամասի վաճառքի գինը կազմում է 2500 (երկու հազար հինգ հարյուր) դրամ՝ ըստ կադաստրային արժեքի (1 հա կադաստրային զուտ եկամուտը՝ 2500 դրամ):

3. Սահմանել, որ սույն որոշմամբ օտարվող հողամասը տրամադրվում է բացառապես գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով:

4. Սույն որոշման առաջին կետում նշված հողամասի օտարման համար Գ. Մ. Չոբանյանի հետ կնքել առուվաճառքի պայմանագիր:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Գ. Մ. Չոբանյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից::

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2020 փետրվարի 28
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 փետրվարի 2020թ. N 97-Ա

Ա. Լ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍՆ ԸՆԴԼԱՅՆԵԼՈՒ ԵՎ ԱՅՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետերին, Ջերմուկ համայնքի ավագանու 2018 թվականի մարտի 16-ի «Ջերմուկ համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասերը օրենսդրության պահանջներին համապատասխան ուղղակի վաճառքով օտարելու կամ վարձակալության տրամադրելու մասին» N 21-Ա որոշման համապատասխան, հաշվի առնելով Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղի բնակիչ Ա. Լ. Հարությունյանի դիմումը (մտից N 42, 17.01.2020 թ.)

որոշում եմ՝

1. Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղի բնակիչ Արամ Լիպարիտի Հարությունյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Գնդեվազ գյուղի 4-րդ փողոցի N 16 հասցեում գտնվող սեփական բնակելի նշանակության օժանդակ շինությունների սպասարկման հողամասը (մակերեսը՝ 935 քմ) ընդլայնել. այդ նպատակով ուղղակի վաճառքով Ա. Լ. Հարությունյանին օտարել Գնդեվազ գյուղի 4-րդ փողոցի N 18 հասցեում գտնվող 160 (հարյուր վաթսուն) քմ մակերեսով հարակից համայնքային սեփականության հողամասը՝ միավորված գույքին տրամադրելով հետևյալ հասցեն՝

Ջերմուկ համայնք, գյուղ Գնդեվազ, 4-րդ փողոց N 16:

2. Սույն որոշման առաջին կետում նշված 160 քմ հողամասի վաճառքի գինը կազմում է 35520 (երեսունհինգ հազար հինգ հարյուր քսան) դրամ՝ ըստ կադաստրային արժեքի:

3. Սույն որոշման առաջին կետում նշված հողամասի օտարման համար Ա. Լ. Հարությունյանի և մյուս համասեփականատերերի հետ կնքել առուվաճառքի պայմանագիր:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ա. Լ. Հարությունյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից::

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2020 փետրվարի 28
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2 մարտի 2020թ. N 98-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ, ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴԸ ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ Կրթության, գիտության,մշակույթի և սպորտի նախարարի հրամանը՝ կորոնավիրուսի հնարավոր համաճարակի և ուսումնական հաստատություններում գարնանային արձակուրդ հայտարարելու մասին՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Ս/թ մարտի 2-ից 8-ը ներառյալ կասեցնել «Ջերմուկ համայնքի «Զատիկ» մանկապարտեզ» ՆՈՒՀ, «Գնդեվազի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների, «Ջերմուկ համայնքի սպորտի, զբոսաշրջության, երիտասարդության և մշակույթի կենտրոն» և «Ջերմուկ համայնքի քաղաքային գրադարան» արտադպրոցական կրթադաստիարակչական համայնքային հաստատությունների գործունեությունը:

2. «Ջերմուկ համայնքի Ռ. Մելիքյանի անվան արվեստի դպրոց» և «Ջերմուկ համայնքի Շ. Ազնավուրի անվան արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային ուսումնական կազմակերպությունների՝ մարտի վերջին նախատեսված դպրոցական գարնանային արձակուրդները տեղափոխել մարտի 2-ից 8-ը ներառյալ:

3. Սույն որոշման 1-ին կետում նշված կազմակերպությունների բոլոր աշխատակիցներին, բացառությամբ կազմակերպության ղեկավարից, հաշվապահից և պահակներից, 2020 թվականի մարտի 2-ից մինչև մարտի 8-ը համարել հարկադիր պարապուրդի մեջ:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2020 մարտի 2
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2 մարտի 2020թ. N 99-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիման վրա և Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 70-րդ հոդվածին համապատասխան, հիմք ընդունելով հողամասն աճուրդով վաճառելու մասին 2020 թվականի մարտի 2-ի N 7 արձանագրությունը **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Հաստատել գյուղատնտեսական գործունեության նպատակով 2020 թվականի մարտի 2-ին կայացած Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքում գտնվող 10-002-0145-0005 կադաստրային ծածկագրով հողամասի, մակերեսը՝ 14 918.9 (տասնչորս հազար ինը հարյուր տասնութ ամբողջ ինը տասնորդական) քմ, օտարման աճուրդի արդյունքները և հիմք ընդունելով հողամասն աճուրդով վաճառելու մասին 2020 թվականի մարտի 2-ի N 7 արձանագրությունը՝ N 1 լոտով աճուրդի հանված Ջերմուկ քաղաքում գտնվող գյուղատնտեսական նշանակության հողամասը վաճառել աճուրդում առավելագույն գին՝ 157 500 (մեկ հարյուր հիսունյոթ հազար հինգ հարյուր) դրամ առաջարկած գնորդ ***Հենզել Խալաթի Մկրտչյանին:***
2. ***Հենզել Խալաթի Մկրտչյանի*** հետ օրենքով սահմանված կարգով կնքել սույն որոշման առաջին կետում նշված հողամասի առուվաճառքի պայմանագիր:
3. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի ստորաբաժանման կողմից:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2020թ. մարտի 2
ք. Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2 մարտի 2020թ. N 100-Ա

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ԳԵՏԱՓՆՅԱ ՓՈՂՈՑ N 3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիման վրա և Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 70-րդ հոդվածին համապատասխան, հիմք ընդունելով հողամասն աճուրդով վաճառելու մասին 2020 թվականի մարտի 2-ի N 8 արձանագրությունը **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Հաստատել հասարակական կառուցապատման նպատակով 2020 թվականի մարտի 2-ին կայացած Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի Գետափնյա փողոց N 3 հասցեում գտնվող 10-002-0107-0010 կադաստրային ծածկագրով հողամասի, մակերեսը՝ 350 (երեք հարյուր հիսուն) քմ, օտարման աճուրդի արդյունքները և հիմք ընդունելով հողամասն աճուրդով վաճառելու մասին 2020 թվականի մարտի 2-ի N 8 արձանագրությունը՝ N 2 լոտով աճուրդի հանված Ջերմուկ քաղաքի Գետափնյա փողոց N 3 հասցեում գտնվող հողամասը վաճառել աճուրդում առավելագույն գին՝ 456 750 (չորս հարյուր հիսունվեց հազար յոթ հարյուր հիսուն) դրամ առաջարկած գնորդ ***Ղևոնդ Օնիկի Ղևոնդյանին:***
2. Ընդունել ի գիտություն, որ սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի վրա առկա է շինություն՝ սրճարան, որն ըստ «ԱՐ ՎԻ ԷՄ ՔՈՆՍԱԼՏ» ՍՊԸ-ի 2019 թվականի ապրիլի 16-ի N ԳՀ 005-19 գնահատման հաշվետվության՝ հաշվի առնելով գնահատողի եզրակացությունն առ այն, որ հողամասում առկա, դեռևս ԽՍՀՄ տարիներին կառուցված 54,72 քմ մակերեսով սրճարանը անավարտ և կիսաքանդ է, հետևաբար՝ որպես շինություն գնահատված չէ և որպես առանձին կառույց որևէ արժեք իրենից չի ներկայացնում:
3. ***Ղևոնդ Օնիկի Ղևոնդյանի*** հետ օրենքով սահմանված կարգով կնքել սույն որոշման առաջին կետում նշված հողամասի առուվաճառքի պայմանագիր:
4. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի ստորաբաժանման կողմից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2020թ. մարտի 2
ք.Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2 մարտի 2020թ. N 101-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐՄՐԱՇԵՆ ԳՅՈՒՂԻ 17-ՐԴ ՓՈՂՈՑ N 1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիման վրա և Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 70-րդ հոդվածին համապատասխան, հիմք ընդունելով հողամասն աճուրդով վաճառելու մասին 2020 թվականի մարտի 2-ի N 9 արձանագրությունը **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Հաստատել հասարակական կառուցապատման նպատակով 2020 թվականի մարտի 2-ին կայացած Ջերմուկ համայնքի Կարմրաշեն գյուղի 17-րդ փողոց N 1 հասցեում գտնվող 10-027-0014-0078 կադաստրային ծածկագրով հողամասի, մակերեսը՝ 17 457.4 (տասնյոթ հազար չորս հարյուր հիսունյոթ ամբողջ չորս տասնորդական) քմ, օտարման աճուրդի արդյունքները և հիմք ընդունելով հողամասն աճուրդով վաճառելու մասին 2020 թվականի մարտի 2-ի N 9 արձանագրությունը՝ N 3 լոտով աճուրդի հանված Կարմրաշեն գյուղի 17-րդ փողոց N 1 հասցեում գտնվող բնակավայրի նշանակության հողամասը 1 170 000 (մեկ միլիոն մեկ հարյուր յոթանասուն հազար) դրամով վաճառել աճուրդի միակ մասնակից, գնորդ ***Արման Արթուրի Կարապետյանին:***
2. ***Արման Արթուրի Կարապետյանի*** հետ օրենքով սահմանված կարգով կնքել սույն որոշման առաջին կետում նշված հողամասի առուվաճառքի պայմանագիր:
3. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի ստորաբաժանման կողմից:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2020թ. մարտի 2
ք. Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2 մարտի 2020թ. N 102-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐՄՐԱՇԵՆ ԳՅՈՒՂԻ 17-ՐԴ ՓՈՂՈՑ N 6 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիման վրա և Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 70-րդ հոդվածին համապատասխան, հիմք ընդունելով հողամասն աճուրդով վաճառելու մասին 2020 թվականի մարտի 2-ի N 10 արձանագրությունը **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Հաստատել հասարակական կառուցապատման նպատակով 2020 թվականի մարտի 2-ին կայացած Ջերմուկ համայնքի Կարմրաշեն գյուղի 17-րդ փողոց N 6 հասցեում գտնվող 10-027-0014-0015 կադաստրային ծածկագրով հողամասի, մակերեսը՝ 20 649.1 (քսան հազար վեց հարյուր քառասունինն ամբողջ մեկ տասնորդական) քմ, օտարման աճուրդի արդյունքները և հիմք ընդունելով հողամասն աճուրդով վաճառելու մասին 2020 թվականի մարտի 2-ի N 10 արձանագրությունը՝ N 4 լոտով աճուրդի հանված Կարմրաշեն գյուղի 17-րդ փողոց N 6 հասցեում գտնվող բնակավայրի նշանակության հողամասը 1 400 000 (մեկ միլիոն չորս հարյուր հազար) դրամով վաճառել աճուրդի միակ մասնակից, գնորդ ***Արման Արթուրի Կարապետյանին:***
2. ***Արման Արթուրի Կարապետյանի*** հետ օրենքով սահմանված կարգով կնքել սույն որոշման առաջին կետում նշված հողամասի առուվաճառքի պայմանագիր:
3. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի ստորաբաժանման կողմից:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2020թ. մարտի 2
ք. Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2 մարտի 2020թ. N 103-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐՄՐԱՇԵՆ ԳՅՈՒՂԻ 17-ՐԴ ՓՈՂՈՑ N 2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիման վրա և Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 70-րդ հոդվածին համապատասխան, հիմք ընդունելով հողամասն աճուրդով վաճառելու մասին 2020 թվականի մարտի 2-ի N 11 արձանագրությունը **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Հաստատել գյուղատնտեսական արտադրական օբյեկտի կառուցման նպատակով 2020 թվականի մարտի 2-ին կայացած Ջերմուկ համայնքի Կարմրաշեն գյուղի 17-րդ փողոց N 2 հասցեում գտնվող 10-027-0014-0005 կադաստրային ծածկագրով հողամասի, մակերեսը՝ 5 596.9 (հինգ հազար հինգ հարյուր իննսունվեց ամբողջ ինը տասնորդական) քմ, օտարման աճուրդի արդյունքները և հիմք ընդունելով հողամասն աճուրդով վաճառելու մասին 2020 թվականի մարտի 2-ի N 11 արձանագրությունը՝ N 5 լոտով աճուրդի հանված Կարմրաշեն գյուղի 17-րդ փողոց N 2 հասցեում գտնվող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողամասը 622 000 (վեց հարյուր քսաներկու հազար) դրամով վաճառել աճուրդի միակ մասնակից, գնորդ ***Արման Արթուրի Կարապետյանին:***
2. ***Արման Արթուրի Կարապետյանի*** հետ օրենքով սահմանված կարգով կնքել սույն որոշման առաջին կետում նշված հողամասի առուվաճառքի պայմանագիր:
3. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի ստորաբաժանման կողմից:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2020թ. մարտի 2
ք. Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 մարտի 2020թ. N 104-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԵՐՀԵՐ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիման վրա և Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 70-րդ հոդվածին համապատասխան, հիմք ընդունելով հողամասն աճուրդով վաճառելու մասին 2020 թվականի մարտի 2-ի N 12 արձանագրությունը **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Հաստատել գյուղատնտեսական գործունեության նպատակով 2020 թվականի մարտի 2-ին կայացած Ջերմուկ համայնքի Հերհեր գյուղում գտնվող 10-028-0148-0048, 10-028-0148-0052, 10-028-0148-0054, 10-028-0148-0016 կադաստրային ծածկագրերով հողամասերի, ընդհանուր մակերեսը՝ 42 943.2 (քառասուներկու հազար ինը հարյուր քառասուներեք ամբողջ ինը տասնորդական) քմ, օտարման աճուրդի արդյունքները և հիմք ընդունելով հողամասերն աճուրդով վաճառելու մասին 2020 թվականի մարտի 2-ի N 12 արձանագրությունը՝ N 6 լոտով աճուրդի հանված Հերհեր գյուղում գտնվող գյուղատնտեսական նշանակության հողամասերը 293 000 (երկու հարյուր իննսուներեք հազար) դրամով վաճառել աճուրդի միակ մասնակից, գնորդ ***«ԱՐՄ ՍՈԼԱՐ» ՍՊԸ-ին՝*** ի դեմս տնօրեն ***Տիգրան Մանուկյանի:***
2. ***«ԱՐՄ ՍՈԼԱՐ» ՍՊԸ-ի*** հետ օրենքով սահմանված կարգով կնքել սույն որոշման առաջին կետում նշված հողամասերի առուվաճառքի պայմանագրեր:
3. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի ստորաբաժանման կողմից:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2020թ. մարտի 2
ք. Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2 մարտի 2020թ. N 105-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԵՐՀԵՐ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիման վրա և Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 70-րդ հոդվածին համապատասխան, հիմք ընդունելով հողամասերն աճուրդով վաճառելու մասին 2020 թվականի մարտի 2-ի N 13 արձանագրությունը **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Հաստատել գյուղատնտեսական գործունեության նպատակով 2020 թվականի մարտի 2-ին կայացած Ջերմուկ համայնքի Հերհեր գյուղում գտնվող 10-028-0148-0070, 10-028-0148-0050, 10-028-0148-0049 կադաստրային ծածկագրերով հողամասերի, ընդհանուր մակերեսը՝ 33 582.9 (երեսուներեք հազար հինգ հարյուր ութսուներկու ամբողջ ինը տասնորդական) քմ, օտարման աճուրդի արդյունքները և հիմք ընդունելով հողամասերն աճուրդով վաճառելու մասին 2020 թվականի մարտի 2-ի N 13 արձանագրությունը՝ N 7 լոտով աճուրդի հանված Հերհեր գյուղում գտնվող գյուղատնտեսական նշանակության հողամասերը 235 000 (երկու հարյուր երեսունհինգ հազար) դրամով վաճառել աճուրդի միակ մասնակից, գնորդ ***«ՍՈՒՆ ՍՈԼԱՐ» ՍՊԸ-ին***՝ ի դեմս տնօրենի կողմից լիազորված անձ ***Անդրանիկ Աբրահամյանի:***
2. ***«ՍՈՒՆ ՍՈԼԱՐ» ՍՊԸ-ի*** հետ օրենքով սահմանված կարգով կնքել սույն որոշման առաջին կետում նշված հողամասերի առուվաճառքի պայմանագրեր:
3. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի ստորաբաժանման կողմից:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2020թ. մարտի 2
ք. Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2 մարտի 2020թ. N 106-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑ N 7/5/3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՄՐՑՈՒՅԹՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով, «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Ջերմուկի համայնքի ավագանու 2019 թվականի նոյեմբերի 19-ի N 82-Ա որոշմամբ, հիմք ընդունելով համայնքային գույքը վարձակալության իրավունքով տրամադրելու մասին մրցույթային հանձնաժողովի 2020 թվականի մարտի 2-ի N 15 արձանագրությունը՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Հաստատել 2020 թվականի մարտի 2-ին կայացած համայնքային սեփականություն համարվող, Ջերմուկ քաղաքի Շահումյան փողոցի N 7/5/3 հասցեում գտնվող 3765.3 քմ մակերեսով բնակավայրերի նշանակության հողամասի (գործառնական նշանակությունը՝ ընդհանուր օգտագործման) վարձակալության իրավունքի տրամադրման մրցույթի հետևյալ արդյունքները՝

· *Մրցույթում հաղթող ճանաչել «ՋԵՐՍԱՆ» ՍՊԸ-ին՝ ի դեմս տնօրեն Արա Սիմոնի Օհանյանի,*

· *Վարձակալության իրավունքի ժամկետը՝ 02.03.2050թ.,*

· *Վարձակալության իրավունքի տրամադրման ամսական վարձավճարի չափը՝ 25 000 (քսանհինգ հազար), յուրաքանչյուր ամսվա վարձավճարը վճարվում է մինչև ընթացիկ ամսվան հաջորդող 15 օրվա ընթացքում՝ 900365031088 հաշվեհամարին:*

· *Վարձակալության իրավունքի տրամադրման նպատակը՝ պուրակ ստեղծելու համար:*

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի տարածքում վարձակալի կողմից կատարված անբաժանելի ներդրումները և բարելավումները համարվում են համայնքային սեփականությունը և հողամասի տարածքի մաքրման, կանաչապատման և բարեկարգման պարտավորությունը կրում է վարձակալը:

3. «ՋԵՐՍԱՆ» ՍՊԸ-ի հետ օրենքով սահմանված կարգով կնքել սույն որոշման առաջին կետում նշված հողամասի վարձակալության իրավունքի տրամադրման պայմանագիր:

4. Սույն որոշումից ծագող գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է «ՋԵՐՍԱՆ» ՍՊԸ-ի կողմից:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2020 մարտի 2
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ *08913735*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

3 մարտի 2020թ. N 107-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 26-Ի N 277-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, նույն հոդվածի 3-րդ մասով և 4-րդ հոդվածով՝ **որոշում եմ՝**

1. Ջերմուկ համայնքի ղեկավարի 2019 թվականի նոյեմբերի 26-ի «Ջերմուկ քաղաքի Մաշտոցի փողոցի երկայնքի տարածքները, ինչպես նաև՝ Ձախափնյակ թաղամասի բնակելի շենքերի բակային տարածքները բարեկարգելու նպատակով ծառերի էտումը թույլատրելու մասին» N 277-Ա որոշման մեջ (այսուհետ՝ որոշում) կատարել հետևյալ լրացումները՝

ա) որոշման վերնագրում «ՁԱԽԱՓՆՅԱԿ » բառից հետո ավելացնել «ԵՎ ԱՋԱՓՆՅԱԿ» բառը, «ԹԱՂԱՄԱՍԻ» բառը փոխարինել «ԹԱՂԱՄԱՍԵՐԻ» բառով:

բ) որոշման 1-ին կետում «Մաշտոցի» բառից հետո ավելացնել «,Շահումյան, Մյասնիկյան, Վարդանյան և Մելիք–Ադամյան» բառերը, «փողոցի» բառը փոխարինել «փողոցների» բառով:

գ) որոշման 1-ին կետում «Ձախափնյակ» բառից հետո ավելացնել «և Աջափնյակ» բառը, «թաղամասի» բառը փոխարինել «թաղամասերի» բառով:

2. Սահմանել, որ սույն որոշման ընդունմամբ ընդլայնվում է ծառերի էտման աշխատանքները կատարող քաղաքացիներների կողմից ծառայությունների մատուցման շրջանակը:

3. Սույն որոշման պատճեն ուղարկել ՀՀ բնապահպանության նախարարության Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի Վայոց ձորի տարածքային բաժնին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2020 մարտի 3
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

3 մարտի 2020թ. N 108-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Ջերմուկ համայնքի ղեկավարի 2020 թվականի փետրվարի 7-ի ««Ջերմուկ գրուպ» ՓԲ ընկերությանը 2020 թվականի ընթացքում Ջերմուկ համայնքի անվանումը ֆիրմային անվանման մեջ օգտագործելու թույլտվություն տալու մասին» N 66-Ա, ««Ջերմուկ-3 առողջարան» ՍՊ ընկերությանը 2020 թվականի ընթացքում Ջերմուկ համայնքի անվանումը ֆիրմային անվանման մեջ օգտագործելու թույլտվություն տալու մասին» N 67-Ա, ««Ջերմուկի բնակչության կենցաղ-սպասարկում» ՍՊ ընկերությանը 2020 թվականի ընթացքում Ջերմուկ համայնքի անվանումը ֆիրմային անվանման մեջ օգտագործելու թույլտվություն տալու մասին» N 68-Ա, ««Ջերմուկի նոր կյանք» ՍՊ ընկերությանը 2020 թվականի ընթացքում Ջերմուկ համայնքի անվանումը ֆիրմային անվանման մեջ օգտագործելու թույլտվություն տալու մասին» N 69-Ա, ««Ջերմուկ Հոթել» ՍՊ ընկերությանը 2020 թվականի ընթացքում Ջերմուկ համայնքի անվանումը ֆիրմային անվանման մեջ օգտագործելու թույլտվություն տալու մասին» N 70-Ա որոշումներում կատարել հետևյալ փոփոխությունը. հղման մեջ «32-րդ հոդվածի 1-ին մասի 16.1-ին կետի» բառերը փոխարինել «35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի» բառերով և «7-րդ հոդվածի 1-ին մասի «ժե» կետի» բառերը փոխարինել «9-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետի» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2020թ. մարտի 3
ք. Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 մարտի 2020թ. N 109-Ա

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ ՍՈՆԱ ԳԱԼԻՄՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, հաշվի առնելով Երևան քաղաքի բնակիչ Սոնա Դանիելի Գալիմյանի դիմումը (մտից N 291, 04.03.2020 թ.) **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Երևան քաղաքի բնակիչ Սոնա Դանիելի Գալիմյանին սեփականության իրավունքով պատկանող Ջերմուկ քաղաքի Երևանյան խճուղու վրա գտնվող 500 քմ մակերեսով բնակավայրերի նշանակության տնամերձ հողամասին տրամադրել հետևյալ հասցեն.

Ջերմուկ համայնք, քաղաք Ջերմուկ, Երևանյան խճուղի N 40/12 հողամաս:

2. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի տարածքային ստորաբաժանման կողմից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է ընդունմանը հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2020 մարտի 4
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 մարտի 2020թ. N 110-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻՆ ՄԻԱՑԱԾ ԱՆԴԱՄՆԵՐԻՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՀԱՄԱԿԱՐԳԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՁԵՎԱՎՈՐՎՈՂ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածով, «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներով, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2016 թվականի փետրվարի 11-ի N 25 -Ն հրամանով՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Սոցիալական ծառայությունների տրամադրման գործընթացում բոլոր շահագրգիռ կողմերի՝ սոցիալական ծառայություններ տրամադրող մարմինների, կազմակերպությունների, ինչպես նաև ֆիզիկական անձանց, համագործակցության լիարժեք կայացումը, հետագա զարգացումն ու գործընկերային հարաբերությունների ձևավորումը խթանելու նպատակով Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի սոցիալական աջակցության Ջերմուկի տարածքային բաժնի կողմից իր սպասարկման տարածքում գործող՝ սոցիալական համագործակցության համաձայնագրին միացած պետական կառավարման հանրապետական մարմինների տարածքային ստորաբաժանումների և տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, սոցիալական պաշտպանության ոլորտում գործող պետական և համայնքային, սոցիալական ծառայություններ տրամադրող այլ կազմակերպությունների ներկայացուցիչներից, ինչպես նաև ֆիզիկական անձանցից Համակարգող խորհրդի կազմում ընդգրկել՝

1. Վայոց ձորի մարզի Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմ
Ջերմուկ համայնք, ք. Ջերմուկ, Մյասնիկյան 8, կայք՝ jermukmunicipality.am, հեռ.՝ 028721217
ներկայացուցիչ՝ Գոհար Թադևոսյան

2. Վայոց ձորի մարզի Ջերմուկի համայքնապետարանի աշխատակազմ
Ջերմուկ համայնք, ք. Ջերմուկ, Մյասնիկյան 8, կայք՝ jermukmunicipality.am, հեռ.՝ 0287 21217
ներկայացուցիչ՝ Սամվել Մարգարյան

3. Վայոց ձորի մարզի Ջերմուկի համայքնապետարանի աշխատակազմ
Ջերմուկ համայնք, ք. Ջերմուկ, Մյասնիկյան 8, կայք՝ jermukmunicipality.am, հեռ.՝ 0287 21217
ներկայացուցիչ՝ Մարիամ Առաքելյան

4. ՀՀ ԱՍՀՆ սոցիալական ապահովության պետական ծառայության Ջերմուկի ՍԱՏԲ

Ջերմուկ համայնք, ք. Ջերմուկ, Ձախափնյակ, 2-րդ փողոց N 3/2, հեռ.՝ 0287 21063, կայք ՝ www.social.am
ներկայացուցիչ՝ Արմեն Դանիելյան

5. ՀՀ Վայոց ձորի մարզի բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողով
ք. Եղեգնաձոր, Վայքի փողոց N 1/1, հեռ. 0281 22465, կայք՝ vayotsdzor.bsph@hhbsp.am
ներկայացուցիչ՝ Հասմիկ Մխիթարյան

6. ՀՀ ԱՍՀՆ Զբաղվածության պետական գործակալության Ջերմուկի զբաղվածության տարածքային կենտրոն
Ջերմուկ համայնք, Ձախափնյակ 2-րդ փողոց N 3/2, հեռ. 028721375
ներկայացուցիչ՝ Արմեն Գրիգորյան

7. Ջերմուկ համայնքի Կեչուտ գյուղի վարչական ղեկավար Սեդրակ Ասատրյան
Ջերմուկ համայնք, գ. Կեչուտ, 9-րդ փողոց 2/3 հեռ. 0287021217,

8. Ջերմուկ համայնքի Կարմրաշեն գյուղի վարչական ղեկավար Ռոման Առաքելյան
Ջերմուկ համայնք գյուղ Կարմրաշեն, 1-ին փողոց, շենք 6, հեռ 077775411,araqelyan2109@mail.ru

9. Ջերմուկ համայնքի Հերհեր գյուղի վարչական ղեկավար, ներկայացուցիչ՝ Արամ Սարգսյան
Ջերմուկ համայնք գյուղ Հերհեր, 24-րդ փողոց, 2-րդ փակուղի, տուն 2, հեռ 094223067, aramsargsyan.sir@mail.ru

10. ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի Ջերմուկի ՍԱՏԲ գլխավոր մասնագետ Ազատուհի Ներսիսյան
ք. Ջերմուկ, Մյասնիկյան փողոց, 24/30, հեռ. 094040545, էլ փոստ՝ nersisyan-57@mail.ru

11.«Ջերմուկի կրթահամալիր» ՊՈԱԿ-ի ուսուցչուհի Մարո Մարգարյան,
ք. Ջերմուկ, Շահումյան 1/47, էլ. փոստ՝ maro.margaryan@mail.ru, հեռ. 093404525:

2. «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին համապատասխան ուժը կորցրած ճանաչել Ջերմուկ համայնքի ղեկավարի 2018 թվականի մարտի 15-ի N 38-Ա որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2020 մարտի 4
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 մարտի 2020թ. N 111-Ա

ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՁԱԽԱՓՆՅԱԿ 20-ՐԴ ՇԵՆՔԻ N 36 ԲՆԱԿԱՐԱՆԻ ԲՆԱԿԻՉ ԳԱՐԻԿ ԱՐՍԵՆԻ ՄԻՆԱՍՅԱՆԻ ՉՎՃԱՐԱԾ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի, 58-60-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 251-րդ հոդվածի, 401-րդ հոդվածի 1-ին մասի, հիմք ընդունելով Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի կողմից 04.03.2020 թ. դրությամբ արձանագրված՝ Ջերմուկ քաղաքի բնակիչ Գարիկ Արսենի Մինասյանին պատկանող AUDI S2 QUATTRO մակնիշի, 34 AQ 883 պետհամարանիշի, 1992 թ. արտադրության ավտոմեքենայի գույքահարկի գծով պարտավորությունը 2016-2019թթ. ընկած ժամանակահատվածի վերաբերյալ, որը կազմում է 362 663 դրամ, որից՝ տույժ՝ 83 465 դրամ, և հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերը նշված փոխադրամիջոցի գույքահարկի գծով պարտավորությունները կատարված չեն՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Ջերմուկ քաղաքի բնակիչ Գարիկ Արսենի Մինասյանից հօգուտ Ջերմուկ համայնքի բյուջեի գանձել 362 663 (երեք հարյուր վաթսուներկու հազար վեց հարյուր վաթսուներեք) ՀՀ դրամ գույքահարկի գումար (վճարման հաշվեհամար՝ 900365031252):

2. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Ջերմուկ համայնքի ղեկավարին՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

4. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Ջերմուկ համայնքի ղեկավարը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Գարիկ Միանսյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2020 մարտի 4
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 մարտի 2020թ. N 112-Ա

ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ 5-ՐԴ ՇԵՆՔԻ N 37 ԲՆԱԿԱՐԱՆԻ ԲՆԱԿԻՉ ԿԱՐԵՆ ՊԱՆԴՈՒԽՏԻ ԳԱԼՍՏՅԱՆԻ ՉՎՃԱՐԱԾ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի, 58-60-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 251-րդ հոդվածի, 401-րդ հոդվածի 1-ին մասի, հիմք ընդունելով Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի կողմից 04.03.2020թ. դրությամբ արձանագրված՝ Ջերմուկ քաղաքի բնակիչ Կարեն Պանդուխտի Գալստյանին պատկանող MERCEDES-BENZ 200 մակնիշի, 31 US 078 պետհամարանիշի, 1993թ. արտադրության ավտոմեքենայի գույքահարկի գծով պարտավորությունը 2015-2019 թթ. ընկած ժամանակահատվածի վերաբերյալ, որը կազմում է 484 927 դրամ, որից՝ տույժ՝ 128 677 դրամ, և հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերը նշված փոխադրամիջոցի գույքահարկի գծով պարտավորությունները կատարված չեն՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Ջերմուկ քաղաքի բնակիչ Կարեն Պանդուխտի Գալստյանից հօգուտ Ջերմուկ համայնքի բյուջեի գանձել 484 927 (չորս հարյուր ութսունչորս հազար իննը հարյուր քսանյոթ) ՀՀ դրամ գույքահարկի գումար (վճարման հաշվեհամար՝ 900365031252):

2. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Ջերմուկ համայնքի ղեկավարին՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

4. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Ջերմուկ համայնքի ղեկավարը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Կարեն Գալստյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2020 մարտի 4
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 մարտի 2020թ. N 113-Ա

ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՁԱԽԱՓՆՅԱԿ 11-ՐԴ ՇԵՆՔԻ N 19 ԲՆԱԿԱՐԱՆԻ ԲՆԱԿԻՉ ԱՐՍԵՆ ԲՈՐԻՍԻ ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆԻ ՉՎՃԱՐԱԾ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի, 58-60-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 251-րդ հոդվածի, 401-րդ հոդվածի 1-ին մասի, հիմք ընդունելով Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի կողմից 04.03.2020 թ. դրությամբ արձանագրված՝ Ջերմուկ քաղաքի բնակիչ Արսեն Բորիսի Առուստամյանին պատկանող INFINITI G36 մակնիշի, 95LP095 պետհամարանիշի, 2008թ. արտադրության ավտոմեքենայի գույքահարկի գծով պարտավորությունը 2017-2019 թթ. ընկած ժամանակահատվածի վերաբերյալ, որը կազմում է 423147 դրամ, որից՝ տույժ՝ 75 522 դրամ, և հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերը նշված փոխադրամիջոցի գույքահարկի գծով պարտավորությունները կատարված չեն՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Ջերմուկ քաղաքի բնակիչ Արսեն Բորիսի Առուստամյանից հօգուտ Ջերմուկ համայնքի բյուջեի գանձել 423 147 (չորս հարյուր քսաներեք հազար մեկ հարյուր քառասունյոթ) ՀՀ դրամ գույքահարկի գումար (վճարման հաշվեհամար՝ 900365031252):

2. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Ջերմուկ համայնքի ղեկավարին՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

4. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Ջերմուկ համայնքի ղեկավարը:

5. Սույնորոշումն ուժի մեջ է մտնում Արսեն Առուստամյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2020 մարտի 4
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 մարտի 2020թ. N 114-Ա

ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԵՉՈՒՏ 9-ՐԴ ՓՈՂՈՑ 1-ԻՆ ՓԱԿՈՒՂԻ 2-ՐԴ ՇԵՆՔԻ N 2 ԲՆԱԿԱՐԱՆԻ ԲՆԱԿԻՉ ԳԱԳԻԿ ԳԱՐՈՒՇԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՉՎՃԱՐԱԾ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի, 58-60-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության հարկայինօրենսգրքի 251-րդ հոդվածի, 401-րդ հոդվածի 1-ին մասի, հիմք ընդունելով Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի կողմից 04.03.2020 թ. դրութ-յամբ արձանագրված՝ Ջերմուկ քաղաքի բնակիչ Գագիկ Գարուշի Հովհաննիսյանին պատկանող LEXUS RX330 մակնիշի, 49AG499 պետհամարանիշի, 2004թ. արտադրության ավտոմեքենայի գույքահարկի գծով պարտավորությունը 2018-2019թթ. ընկած ժամանակահատվածի վերաբերյալ, որը կազմում է 179 899 դրամ, որից տույժ՝ 30 899 դրամ, և հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերը նշված փոխադրամիջոցի գույքահարկի գծով պարտավորությունները կատարված չեն՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Ջերմուկ քաղաքի բնակիչ Գագիկ Գարուշի Հովհաննիսյանից հօգուտ Ջերմուկ համայնքի բյուջեի գանձել 179 899 (հարյուր յոթանասունիննը հազար ութ հարյուր իննսունիննը) ՀՀ դրամ գույքահարկի գումար (վճարման հաշվեհամար՝ 900365031252):

2. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Ջերմուկ համայնքի ղեկավարին՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

4. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Ջերմուկ համայնքի ղեկավարը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Գագիկ Հովհաննիսյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2020 մարտի 4
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

6 մարտի 2020թ. N 115-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԵՐՀԵՐ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ
ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, հաշվի առնելով Ջերմուկ քաղաքի բնակիչ Լևոն Սամվելի Հունանյանի դիմումը (մտից N 293, 04.03.2020 թ.) **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Ջերմուկ համայնքի Հերհեր գյուղում գտնվող 1230 քմ մակերեսով բնակավայրերի նշանակության տնամերձ հողամասին (կադաստրային ծածկագիրը՝ 10-028-043-004, սեփականության իրավունքի վկայական՝ N 1030569) տրամադրել հետևյալ հասցեն.

Ջերմուկ համայնք, գյուղ Հերհեր, 22-րդ փողոց N 14/1:

2. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի տարածքային ստորաբաժանման կողմից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2020 մարտի 6
Ջերմուկ